

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.



Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(քաղկի կիրակի եւ տոն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յովհաննէս քահանայ, Մարտիրոս աւագ քահանայ եւ Գուրգայ Ամիրխանեան-
ները, Գրիգոր Նալբանդիւնի եւ Եկատերինա Բողդանովնա Իսախանեանները ցաւօք արտի
յայտնում են ծանօթներին եւ ազգակիցներին առաջինի ամենասիրելի կնոջ, երկրորդի
ու երրորդի—հարսի, չորրորդի—եղբոր աղջկայ եւ հինգերորդի—տաղեր աղջկայ

ՕԼԳԱ ՂԱԶԱՐԵԱՆ ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑԻ

անժամանակ մահը, խնդրում են չորս բերել յուզարկաւորութեան, որ լինելու է կի-
րակի օրը, ամսին 4-ին, առաւօտեան 10½ ժամին, ու Գէորգ Կաթողիկէ եկեղեցին,
Բաղդասարեանի տանից, որ գտնվում է Կաթողիկոսի փողոցում, ապա դէպի Սոֆի-
ական գերեզմանատուն: Ամբիօքը շաբաթ օր, երեկոյան 6½ ժամին: 1—2

Կիրակի, փետրվարի 4-ին
ԴԱՐԻԱ ԶԱԳԱՐԵԱՆ ՄԻՐԶՈՅԵԱՆԻ
մահվան տարեկիցի օրը Մոսկու ու Գէորգ եկեղեցում կը մատուցվի պատարագ եւ ապա
տեղի կունենայ հոգեհանգիստ հանգուցեալի յիշատակին: Պատարագը կը սկսվի ժամի
11-ին, իսկ հոգեհանգիստը—12½-ին: 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Բերիական հիւանդութեան ախտաւորների
ապատարան.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մա-
մուլ. Արծաղանքներ. Նամակ Գանձակի գաւա-
նից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Նամակ Ֆրանսիայից. Արտաքին լու-
րեր.—ՀԵՌԱԳԻՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեր հոգեւոր հաստա-
տութիւնների շուրջը:

**ԲԻՅԼԻԱԿԱՆ ՀԻՒԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ԱԿՏԱԻՈՐԵՆ-
ՐԻ ԱՊԱՍՏԱՐԱՆ**

Այն սոսկալի հիւանդութիւնը, որի մա-
սին այնքան յաճախ կարգում են բերիա-
կան զրբերում, այն է մարդկանց բորո-
տութիւնը, մինչև այժմ շարունակում
է պահպանել իր գոյութիւնը ոչ միայն
հարաւում, այլ և հիւսիսում հիւսիսում, օ-
րինակ Բալտիկ ծովի ափերում: Բորոտու-
թեամբ հիւանդներ կան թէ հիւսիսային

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՇՈՒՐՁԸ**

Աւելացրէք այս բոլորի վրա այն սոսկալի
հաւատը, որ ժողովուրդն ունի դէպի հոգեւոր
իշխանութիւնը—այն է թէ ամեն բան կարելի
է անել փողի ու ժողովի, եւ ամեն ինչ կատարել
կը լինի: Մենք գիտենք, որ բարեկարգ երկ-
րում, հաստատուն օրէնքը եղած տեղերում
էլ շատ անգամ արդարութեան ձայնը խելոյ-
վում է մամուլային շնորհիւ, բայց ուրիշ տեղե-
րում զրանք լինում են գաղափար, գողտչի եւ
ուշ ուշ եւ թէ բնական յանցագործութեան
մէջ, կրում են ամենամանր պատիժ, մինչդեռ
մեր հոգեւոր երախտի մէջ մամուլն գերա-
զատել է ամեն բանից, մանաւանդ, երբ ու-
կին իր գրպանն է մտնելու եւ չենք յիշում, որ
այդպիսի յանցագործութեան մէջ բռնվածը
պատժվի:

Քահանայ յանցանք է գործել, որի համար
արժանի է պատժի. փոխանորդը զինում է ա-
ռաւորդին. քահանայ, տեղական լուս միջո-
ցից բաժին պատրաստելով, առանց անցազի
ստանալու, գնում է առաջնորդի մօտ, ընդուն-
վում, վարձատրվում եւ վերադառնում՝ փոխա-
նորդին ծաղրելու. կամ փոխանորդը մի քա-
հանայի փրօնն առնում է, առժամանակ դա-
դարեցնում, որովհետեւ տեղական հանգամանե-
ները այդ են պահանջում. պատժվածը հեռա-
գրում է առաջնորդին, երբեմն եւ աւելի

ասելով, հարցը ստացել է ընթացիկ և նա
շատ մօտ է իրագործութեան: Ապաստա-
րանի տեղը նշանակված է Շարուր-Դարա-
կաղեալի գաւառի Ղըղ-Ղալասի կոչված
տեղը, որ գտնվում է գաւառի կենտրոնում և
ունի վարուցանքի համար ընդարձակ տա-
րածութիւն: Այդ տեղը մօտ է և ապա-
գայ երկաթուղիական գծին: Ապաստարա-
նը հիմնվում է 200 հիւանդների հա-
մար և պէտք է պահանջէ միանգամայն
200.000 ռուբլի, իսկ տարեկան մօտ
40.000 ռուբլի:

Ապաստարանը պէտք է կղզիացրած լինի
իր շրջապատող տեղերից և պարունակէ
ամեն տեսակ յարմարութիւններ թէ հի-
ւանդների և թէ բժիշկների ու ինստի-
տուտների համար: Մասնաւորները պէտք է
վայելեն պաշտօնական ծառայութեան ա-
մենամեծ արտօնութիւնները ունենալի
և կենսաթոշակի վերաբերութեամբ:

Բորոտ հիւանդներ Թիֆլիսի հիւանդի ին-
զիլում յայտնի են 11 անձ, Բագուրի հա-
հանգի տան և ութ գիւղում 19, Գուրգայ
հիւանդի երկու գիւղում 2, Գանձակի հա-
հանգի մէկ գիւղում 3, Երևանի հիւանդ-
ների տան մէկ գիւղում 18 անձ:

Հասկանալի է, որ բորոտների ապաստա-
րանը թէ օգնութիւն կը հասցնէ դժբաղդ
հիւանդներին և թէ կապատէ մեր գիւղե-
րը այնպիսի վտանգաւոր ախտաւորներից,
ինչպէս են բորոտները: Ուրախ եմ, որ
ապաստարանի հիմնարկութիւնը մօտ է ի-
րագործութեան: Դա անհրաժեշտ մի հիմ-
նարկութիւն է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Ն

Մեր վանական ամսագրերից մէկը, ինչպէս
երեւում է, խաւարման շրջանի մէջ է մտել:
Դա Վիկենայի «Հանդէս Ամսօրեան» է, որի
այս տարվայ առաջին համարը դեռ չենք ստա-

թեմերի կառավարչութեան հարաւոր չափ
մօտիկից, որքան ներքի է մեր ժամանակը տա-
րիների ընթացքում, մենք մասամբ համաձայն
ենք վեհափառ կաթողիկոսի հետ, որ մարդ չը
կայ, անկեղծ, գործին նուիրված եւ իր անձին
նկողմից տուող պաշտօնական շատ քիչ կան:
Բայց գործերի թարաւ ու շիտակութեան,
հրամանների հակասութիւնների, մէկի արածը
միւսի քանդակը պատճառը ոչ թէ մարդ չը
լինին է, այլ կարգի, օրէնքի, հրահանգների
բացակայութիւնը:

Մեր հոգեւոր-վարչական սիստեմը կատարե-
լապէս անհատական է. այսօր առաջնորդը կա-
մեցաւ, գործակալին տալիս է լրագոր իրա-
ւունք «կապիւլու եւ արձակելու», վաղը իսկ
է փոխանորդից նրա իսկ իրաւունքները, դարձ-
նելով նրան մի առարկայ. այսօր այս կերպ է
տնօրինում, վաղը նոյն տեսակ բանի համար,
նայած արամարդութեան, ուրիշ կերպ եւ տու-
թող կողմը հնար չունի բողբոջելու, որովհետեւ
մենք ու փոքր պաշտօնականները բոլորն էլ անձ-
նական հասկացողութեամբ են կառավարում:
Մի առաջնորդ իր կարծիքով մի կարգադրու-
թիւն է անում. դեռ արմատ չը բռնած, նրա
յաջորդը—երկրորդ առաջնորդը գրան հակառակ
հրամանով արմատախիլ է անում իր նախորդի
տնկածը, որովհետեւ իր կարծիքով պէտք չէ:
Եւ այդ է պատճառը, որ մեր հոգեւոր գործե-
րում արքան պաշտօնեայ կայ, այնքան էլ կա-
ռավարչութեան ընդունակութեան բացակայու-
թիւնը, ընդհանուր պետական օրէնքից տեղե-
կութիւն չունենալը եւ դուք կը ստանաք մի
կատարելալ, բայց ցաւալի պատկեր:
Եթէ մենք մեր առաջնորդ յակնէ յանունն

ցել, մինչդեռ «Բաղմովէպը» արդէն լոյս հանեց
իր երկրորդ համարը: Ի՞նչ է սա նշանակում
Միթէ ճիշդ էին այն լուրերը, որոնք անցեալ
տարի տարածվել էին Վիկենայի Միթթարեան-
ների մէջ ծագած հերքին անհամաձայնութիւն-
ների մասին. միթէ ճիշդ է, որ հին սերունդը
այնտեղ յաղթող հանդիսացաւ եւ դադարեց-
րեց «Հանդէսը», ինչպէս ինքն էր կամենում:
Չը գիտենք: Մենք դեռ յոյս ունենք, որ «Հան-
դէսը» կը շարունակէ իր կանոնաւոր հրատա-
րակութիւնը. շատ ցաւալի կը լինի մի այն-
պիսի լուր՝ գիտնական ամսագրի կորուստը.
իր ընտրած ուղղութեան մէջ «Հանդէսը» շատ
օգտակար է հանդիսացել եւ մի քանի տարի շա-
րունակ հեղինակութիւն եւ համակրանք էր
ձեռք բերել: Վիկենայի հայ ամսագիրը, ինչ-
պէս հաղորդում էին անցեալ տարի, չէ կա-
րողանում իր ծախսերը ծածկել, որովհետեւ
միայն 50 բաժանորդ ունի: Այդքան քիչ ստա-
ցողների պատճառը անշուշտ այն պիտի լինի,
որ ամսագիրը վերջին ժամանակները շատ էր
չոր-մանապիսական դարձել, շատ էր կորցրել
իր նախկին գրողները, երբ նա մասնագիտո-
կան գրութեանը հետ տալիս էր եւ այնպիսի
նիւթեր, որոնք հետաքրքրական էին եւ ոչ-
մասնագէտ ընթերցողների համար: Այնու-
թեան այդ գաղափարը ըմբռնեց Վիկենայի
«Բաղմովէպը», որ, ինչպէս շատ անգամ ասի-
ենք ունեցել չելուկու, ամեն ջանք գործ է
գնում ընթերցողների շրջան գրաւելու: «Բաղ-
մովէպը» իւրաքանչիւր համարի վրա նկատելի
է խմբագրութեան ջանքը. դեղեցիկ արտաքին
եւ հարաւոր չափ բաղմովէպի բովան-
գակութիւն—այս է այդ ջանքերի հետեւանքը:
Վերջերեւս նկատելի են մանաւանդ լուս նշան-
ներ ուղղութեան մէջ, ամսագիրը այնպիսի
է դուրս գալ կրօնական նեղ շրջաններից եւ
լինել մի հայ օրգան, որի համար կարեւոր նը-
շանակութիւն ունենալ այդ լեզուի, ազգութեան,
գրականութեան: Փետրվարի համարում «Բաղ-
մովէպը» արժարժում է հայ գաղթականու-
թիւնների հարցը: Մի շատ կարեւոր եւ հե-
տաքրքրական հարց մեր ազգի գոյութեան
տեսակետից: Գաղթականութիւնները այն կը-
տրուված երակներն են եղել, որոնց միջոցով
դուրս է թափվել հայութեան օրինակ դարերի
ընթացքում: Եւ այժմ էլ այդ արնաքամ անող

ժամանակագրական կարգով ու թեմերի վերա-
ծելով ցոյց տալիս, այդ փաստերը կը կազ-
մէին մի պատկերի հաստոյթեամբ գիրք, որ
յուշարձանի նման կը յիշեցնէր մեր հոգեւոր
հայրերին, թէ ինչ կորստաւոր ճանապարհով
են նրանք առաջնորդում ժողովրդին:

Մարդ մը չունիմ, ստում է վեհափառ Կա-
թողիկոսը: Բայց մարդիկ ընդունակութիւննե-
րով ժողովուրդը կառավարելու շնորհքով չեն
ծնվում, այլ կեանքի փորձ է, գիտութիւն է,
որ մարդկանց դարձնում է կառավարիչ, զեկա-
վար եւ այլն: Մենք չունենք օրէնք, օրէնք
սուեք հաստատուն, անշուշտ, մշտական, այն
ժամանակ կը տեսնէք, թէ արքան հեշտ կը լի-
նի կառավարել հոգեւոր գործերը:

Պետական հաստատութիւնների մէջ բոլոր
պաշտօնականները ընդունակ չեն, բայց անհմուտ
ենք գործի կանոնաւոր ընթացքում, որովհե-
տեւ պաշտօնեան իր կոչման համապատասխան
պարտաւորութիւն են իրաւունք ունի, որից
չեղվելը պատժում է վրանդ. նրա ամեն մի
քայլի համար գծված է սահման, որի մէջ նա
պարտաւոր է պտտել, քանի այդ օրէնքը գո-
յութիւն ունի:

Մասնաւոր մեզ պէս ժողովրդի եւ սրանից
ծնված հոգեւոր վարչական պաշտօնականների
համար, որոնք ի բնէ անհատականութեան
ձգտելով, ինքնիշխանութեան տենչով տողոր-
ված՝ ամեն մէկը իրն է կամենում անել: Սա
անագին նշանակութիւն ունի, որի վրա հրա-
ւիրում ենք ընթերցողները ուղարկել իրեն-
Հանգուցեալ Արքունիքի տարիներն առաջ մեզ
հայերիս շատ գեղեցիկ էր ընտրել, որ ամեն
մէկս առանձին վերջրած ընդունակ, գործող եւ
չնորայի անը, բայց խմբական գործունէու-

երակները դեռ չեն գոյցված, այժմ էլ նրանցից դեռ ծորում է արիւնը: Մեր գաղթականութիւնների լիակատար պատմութիւնը մենք դեռ չունենք. եւ «Բազմավէպի» այս յօդուածի մէջ զրաւ պատմական տեսութիւնը չափազանց կցկտուր է, վայրիվերոյ: Ուսելով այժմ գոյութիւն ունեցող հայ գաղթականութիւնների մասին, յօդուածագիրը փոքր ի շատէ միտիւթա-րական հանգամանքներ գտնում է միայն Բօլ-գարիայում, ուր հայերը մնում են հայ, ունեն մամուլ, պահպանում են իրանց լեզուն. մինչդեռ Եգիպտոսի, Ամերիկայի եւ այլ տեղերի հայերը համարեա թէ բոլորովին ոչնչացել են կամ ոչնչանալու վրա են: Այդ արագ ձուլման եւ ոչնչացման պատճառը, «Բազմավէպի» կարծիքով, զանազան երկիրներում տիրող հասարակական եւ պետական կարգերն են: Ուստի ասում է.

Հոն ուր չի կայ քաղաքական եւ գրական կաշկանդում, ճշնում, հոն ուր չի կայ կրօնական երկպառակութիւնը, մանաւանդ յայտնի եւ գաղտնի գաւառափոխութեան հոսանքը մը,
— Հոն գ աղ թ են ք:

Ո՛չ, կասնք մենք: Այդ «հոնքներն» էլ մեզ համար աւետեաց երկիր չեն: Հայ գաղթականութիւնների պատմութեան փրկութեամբ պատմական դասը այն է, որ ամեն տեղ, ամեն տեսակ հանգամանքների եւ դրութիւնների մէջ, հայը ձուլվելու, ոչնչանալու. դատաւարութիւն է, որովհետեւ նա անկախ ենթարկվող է, չունի ազգային ինքնորոշութիւն, իր լեզուն, իր գրականութիւնը արհամարհում է: Այսպիսի թշուառ յատկութիւններով նա նոյն իսկ իր հողի վրա, ուր ապրում է ահագին բազմութիւններով, ենթարկված է ձուլվելու, այլա-ստովելու վտանգին: Ո՛ւր մնաց, որ նա պահվէր օտար երկրի տակ: Երբ դուք տեսնում էք, որ մի բուն հայեր, կանխելով կրօնաւարների չեղձեցիկները, լարձ միջոցում բոլորովին մոռանում են իրանց մայրենի լեզուն եւ դառնում են չեղձեգիւստ, իրաւունք ունեւ կարծեւ թէ այդ նոյն հայը կարող է գիմանալ Ամերիկայի պէս մի երկրում, ուր հզօր կուլտուրան ձուլում, կրնում է մեզանից աւելի պարտաճանաչ, աւելի բարձր կանգնած ազգերը: Բօլգարիայի գաղթականութեան օրինակը համոզիչ չէ. այդ գաղթականութիւնը դեռ նոր է, 1895—1896 թւականների դէպքերից յետոյ այնտեղ գնացին Կ. Պօլսի շատ գրագէտ հայեր, որոնք եւ մամուլ հիմնեցին, զբաղ-րոցներ բաց արին: Բայց թէ այժման դրութիւնը լայատեւ չէ կարող լինել, դրան ապացոյց է— Հնդկաստանի հայ գաղթականութիւնը, մի ժամանակ նա այնքան լուսաւորված էր, այնքան գրգռեւ եւ պարբերական հրատարակութիւններ էր տպում: Բայց ինչ եղաւ վերջը: Սրանով մենք չենք ուզում ասել թէ բոլոր հայ գաղթականութիւնները անլուսավիթ կորստեան մատնված են: Ո՛չ, թող հայը Եւրօպա-

թեան կատարելապէս անընդունակ, մեր հասարակական գործերի մէջ անպարտաճանաչ, բայց նոյն հայը պետական պաշտօնների մէջ օրինակելի պաշտօնակա է, նուիրված իր գործին: Պատճառն այն է, որ մեր գործերի մէջ չը կան յատուկ օրէնքներ եւ հրահանգներ եւ հակող դրանց ճիշդ գործադրութեան վրա:

Բայց ինչպէս, ո՞վ պիտի տայ այդ օրէնքն ու հրահանգութիւնները:

Անշուշտ բարձր հոգեւոր իշխանութիւնը, էջմիածինը:

Բայց ո՞վ կայ այնտեղ: Ոչ քո: Թող ներեն մեզ մեր հոգեւոր հայրերը, որ այսօր յոռեմեան ենք դարձել էջմիածին գործողները. բացառ-րենք դէպ պատմականները: Արդի սինօզի անդամները, բայց մէկից, երկար ժամանակ դուրսը պաշտօններ են վարել, փոխանորդ են եղել, առաջնորդ են եղել ուրեմն պիտի ենթադրէինք, որ նրանք իրանց կաշուի վրա փորձած պիտի լինէին կամայականութեան չարիքը. նրանք պիտի լուս գիտենային այն արհամարհանքը, որ ժողովուրդը տածում է դէպի հոգեւոր վարչա-կան մարմինները եւ օրանց պատճառները, ծա-նօթ պիտի լինէին այն բոլոր պահանջներին, որոնք իրանց չըմանում այրող հարցեր են եղել: Մենք անձամբ այժման սինօզի անդամ-ներին մէկին, որ մի քանի տարի առաջ ընդարձակ վիճակի կառավարիչ էր, հարցնում էինք, թէ այս ինչ կամ այն ինչ խնդիրն ինչու էք թողնում անուշադիր, եւ նա պատասխա-նում էր, որ իր իրաւունքներից բարձր է կարգադրել, պիտի սինօզին անէ այդ: Այժմ սինօզի անդամ է, ուրեմն ձեռնհաս առաջ մղելու իր ծրագրերը, եթէ ունեցել է, բայց... էջմիածինը ոչինչ չէ անում բարեկարգելու համար.

յուս պահպանէ իր ազգային ինքնճանաչու-թիւնը գաղտնիքի, գրականութեան միջոցով եւ, որ զխաւարն է, բարոյական—մտաւոր չա-հերով կապվէ իր բուն հայրենիքի հետ, եւ այն ժամանակ նա կերկրորդն է իր գոյութիւնը օտար աշխարհներում: Մենք չարունակ լուսմ ենք թէ Բօլգարիայում եւ Ամերիկայում հայերէն մամուլ կայ. բայց ո՞վ է նրա երեսը տեսնում: Կղզիանալը, տեղական շահերի եւ խնդիրների մէջ կաշկանդվելը անկեղծանութեան առաջին նշանն է: Պատմութիւնը մեզ ուրիշ դասեր չէ տալիս, եւ այդ պատճառով էլ ամենից անսխալ դրութիւնն այն կը լինի, որ հայը պիտի աշխատէ չը գաղթել:

ԱՐՁԱՅԱՆՔՆԵՐ

XXXIV

Մեր եկեղեցին մի առաւելութիւն ունի, որով կարելի է պարծնալ առանց չօվնիստ լի-նելու,—այդ նրա ժողովրդական ոգին է, այն ընտրական սկզբունքն է, որին ենթակայ են մեր հոգեւորականները քահանայից սկսած մինչ-չեւ կաթողիկոսը: Եւ այդ սկզբունքի վերաբերմամբ է, որ ամենից պարզ երեւում է ազա-տամիտների եւ պահպանողականների գաղափա-րական տարբերութիւնը:

Մինչդեռ ազատամիտները, իբր կուսակից այն ամեն բանի, որ նպատաւոր է ժողովրդի չա-հերին եւ հասարակական նրա իրաւունքնե-րին, պաշտպանում են այդ սկզբունքը ամեն դէպքում, պահպանողականները, որոնք աւան-դապա՛ս են հռչակում իրանց, ընդհակառակը ամեն կերպ մաքառում են այդ սկզբունքի դէմ:

Այդ հակասութիւն է, ի հարկէ, բայց աշխարհը արամաբանութեամբ չէ կառավարվում, այլ իրական ոյժերով, նիւթական եւ բարոյա-կան, եւ որովհետեւ ժողովուրդը, անգիտակից իր ոյժին եւ իրաւունքներին, թողնում է, որ մեր եկեղեցու ղեկավարները հանգիստ ընկող ջարդեն իր գլխին, իսկ ազատամիտ կուսակ-ցութիւնը թող էլ այն ապարէզում, որ հար-ցերը վճռվում են անձնական ազդեցութիւննե-րով, զանազան ինտրիգներով եւ յաճախ աղա-չանքներով,—յաղթանակը տանում են լաւ աւանդութիւնները քանոզը «աւանդապահները» եւ մեր եկեղեցու ժողովրդական սկզբունքը զոհ է բերվում զանազան «խաղօրների» եւ «նշանակով»-ների սիրուն:

Այդ պայմաններում եւս աւելի ջերմ կերպով պէտք է ողջունել այն կոնգրէսը, որ ամենայն հայոց կաթողիկոսը ուղարկում է այժմ Պարս-կաստանի Ատրպատականի թեմին:

Ինչպէս ընթերցողները կը տեսնեն այսօրվայ համարում տպվող լուրից, այդ կոնգրէսի հա-մաձայն, այսուհետեւ Ատրպատականի առաջ-նորդը ոչ թէ նշանակվելու է, այլ ընտրվելու ժողովրդից, այսպէս, ինչպէս այդ անվում է թիւքիստիայում:

պիտի ենթադրել, որ կամ այնտեղ տեղեկու-թիւն չունեն թէ ինչ ու ինչ է հարկաւոր ժո-ղովրդին ու հոգեւոր հաստատութիւններին, կամ նախաձեռնող ոգի չը կայ: Մենք ընդու-նում ենք երկուսը միասին:

Մեր առաջնորդներն ու փոխանորդները պաշտօններ վարած ժամանակ ամենեւին ու-չաղորդութիւն չեն դարձրել ու դարձնում իրանց յանձնված հօտի պէտքերը միատեղ ամփոփել, ամեն մի առանձին դէպք վճռել են եւ վճռում են ըստ քմաց եւ մոռացութեան տուել, չեն հետաքրքրվել ոչ եկեղեցական գործերով, ոչ քահանայական խնդրով եւ ոչ իսկ հակողու-թիւն են ունեցել, թէ արդեօք իրանց ստորա-դրեալ պաշտօնականները ինչպէս են վարում ի-րանց պարտաւորութիւնները: Մենք մի քանի հոգեւոր կառավարութիւններից ուղեցել ենք տեղեկանալ, թէ արդեօք գիւղական եկեղեցի-ների դրամագլուխները, որոնք «ВѢДОМОСТЬ»-ների մէջ գրվում են, առձեռն են, թէ մուրհա-կով կամ առհասարակ յուսալի են, թէ միայն թղթի վրա են գրված: Եւ ցաւ է ասել, որ ոչ մի հոգեւոր հաստատութիւն չէ կարողացել բաւականութիւն տալ: Մի ուրիշ անգամ ցան-կացել ենք իմանալ, թէ փոխանորդը կամ առաջ-նորդը գիտեն թէ քահանան ինչ է ստանում, ինչպէս է ապրում կամ ինչ յարաբերութեան մէջ է դէպի ժողովուրդը, նրանք երբեք չեն ցոյց տուել լիակատար վիճակագրական տեղե-կութիւն ոչ մի հարցի համար: Ապա ինչ են արել: Նրանք «եօլա» են տարել ընթացիկ գոր-ծերը եւ շատ գոհ են եղել, որ ազատ ժամանակ աւենն քաղաքում բարեկարգական կապի հա-տատել, իսկ գիւղերից ժամոց ստանալու: Բնա-կանաբար այդպիսի պաշտօնեան, ինչպիսի բարձր

կարելի է, ի հարկէ, նկատել, որ Թաւրիզի քահանաներն ու Թաւրիզի եկեղեցիների ծխա-կանները չեն կարող արտայայտել ամբողջ թե-մի կամքը, եւ ցանկալի է, որ մի միջոց գտնվի թեմի ամբողջ ժողովրդի վրա տարածելու այդ ընտրական իրաւունքը, բայց յամենայն դէպս չէ կարելի համակրութիւն չը յայտնել կօնգրէսի ընդհանուր ոգուն եւ այն կէտին, որով առան-ձին իրաւունք է տրվում ընտրութեան մաս-նակցելու գաղտնիքի հոգաբարձութեան եւ ու-սուցչական խմբին:

Կանօնաւոր պայմաններում այդպիսի արտո-նութիւններ ամենեւին ցանկալի չեն, բայց, ի նկատի ունենալով այն պայմանները, որոնց մէջ ապրում են պարսկահայերը, եւ այն դերը, որ խաղում է առաջնորդը գաղտնական հարցե-րում, չէ կարելի օկղբունքի սահմանափակումն տեսնել այդ բանում:

Այժմ մնում է ցանկալ միայն, որ Թաւրիզի-ները օգտվեն, ինչպէս հարկն է, իրանց վերա-դարձված իրաւունքից եւ որ մեր հոգեւորական-նութիւնը, միշտ բարձր պահելով մեր եկեղե-ցու ժողովրդական սկզբունքը, վերացնէ այն նորամուծութիւնները, որոնք հակապակ են այդ սկզբունքին, եւ ամենից առաջ աշխարհական-ներից զատ յատուկ հոգեւորական հոգաբարձու-ներ հաստատող նոր կարգը:

Ներսիսեան դպրոցի նոր հոգաբարձութիւնը արդէն սկսել է խել ուսուցչական ժողովից նրա իրաւունքները եւ վճռել հարցերը այն ձեւով, որ վրդովեցնում է գրեթէ բոլոր ուսու-ցիչներին խիղճը:

Անկասկած է, որ այդ բանում մեծ դեր են խաղում հոգաբարձութեան քահանայ անդամ-ները, որոնք, երբ հարցը աշակերտին է դալիս, փոխանակ Աւետարանի «եօթնասուտն անգամ եօթը անգամ» ներելու պատուէրը յիշելու, քա-րաւիր են դառնում, իսկ երբ հարցը այնպիսի անձնաւորութեան է վերաբերվում, որ սիրա-չանել գիտէ, մոռանում են, որ դպրոցն էլ տա-ճար է, որտեղից Գրիստոս խաղաղանով դուրս կանէր նրա սրբութիւնը չը յարգողներին:

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻ ԳԱԽԱՌԻԾ

Յունվարի 18-ին

Նոր ձեռք առած խիստ միջոցների շնորհիւ Գանձակի գաւառը հետզհետէ մաքրվում է աւաղակներից եւ գողերից. գողերը շատ անգամ դիմում են այս կամ այն գիւղացուն եւ զանա-զան իրեր կամ կենդանիներ պահանջում, աւե-րացնելով որ իբր թէ իրանց ուղարկված են յայտնի աւաղակապետից, մինչդեռ այդ կեղե-քութիւնների մասին աւաղակապետը բոլորովին տեղեկութիւն չէ ունենում: Լինում են աւա-ղակների մէջ եւ այնպիսի աղիւ զգացումներ լսել անձինք, որ իրանք խիստ պատժում են իրանց անունով հարստահարութիւններ գործող ստանակ գողերին:

պաշտօնի էլ հասնի, չը պիտի կարողանայ մաղի-չափ անգամ չեղել մեքենայի ընթացքը: Մենք մօտիկից ճանաչում ենք Ալէքսանդրօ-պօլի վիճակը: Սա մի ահագին վիճակ է, 125 հայաբնակ գիւղերով, մի համարեա, զուտ հա-յարնակ քաղաքով,—մի վիճակ, որ ունի մօտ 200 հազար հայ բնակիչ եւ 170 քահանայ եւ իր ընդարձակութեամբ ու բազմամարդութեամբ գերակշռում է բոլոր փոխանորդութիւններին: Այդ ընդարձակ վիճակն էլ կառավարվել է եւ այժմ էլ կառավարվում է մի վարչապետով, ուր եւ դատաւոր է, եւ օրէնսդիր, եւ կարգա-պահ, եւ ընթացիկ գործերը կառավարող: Մենք միշտ աչառ ենք մնացել, թէ ինչպէս այստեղի փոխանորդները ժամանակ են ունեցել իրանց պաշտօնից դուրս դեռ երկույ առաւօտ ժամ գնալ, մեռելի, հարսանիքի հանդէսներ կատարել: Բայց երբ մօտիկից ենք ծանօթացել գործին, նկատել ենք, որ փրկաբար «եօլա» գնալն է եղել պատճառը:

Մեր փոխանորդներն ու առաջնորդները «եօ-լա» են գնացել մինչեւ այժմ, բայց այլ եւս այդ եօլա գնալը ձեռք չէ տալիս: Ժողովրդի աչքը բաց է, մամուլը նրա պաշտպան, գործ, արդա-րութիւն, կարգ ու օրէնք են պահանջում, նրանք այլ եւս չեն ցանկանում կամայականու-թեամբ հնազանդելու իսկ էջմիածնի այժման ղեկավարները չեն կամենում կամ չը գիտեն ուս վրա է մնում պարտաւորութիւնը: Մեր կարծիքով ստորին պաշտօնեաների վրա—փոխա-նորդների, որոնք աւելի մօտիկ են կանգնած ժողովրդին, որոնք աւելի ծանօթ են ժողովրդի կարիքներին: Բարեկարգաբար, վեհափառ Կա-թողիկոսը համարեա բոլոր փոխանորդութիւն-ները յանձնել է երիտասարդ վարչապետներին,

Այսպէս թէ այնպէս՝ այժմ նկատելի կերպով նուազում են գողութեան դէպքերը. այս բանում մեծ եւ ազդեցիկ դերը խաղում է գաւառա-մասի պրիստաւը: Այժմ իրանց փորձառութեամբ, հմտութեամբ եւ գործունէութեամբ աչքի են ընկնում—երկրորդ մասում պրիստաւ Եփրեմ-Ֆիկելը, երրորդ մասում Մ. Տէր-Աստուածա-տրեանը: Դեկտեմբերի 31-ին Եփրեմ Ֆիկելը կա-լանաւորեց Ոսկանապատ գիւղում երկու աւա-ղակ եղբայրներին—Աբրահիմ եւ Ալիին, թէեւ կալանաւորման ժամանակ առաջինը իր հրա-գանով գնդակահար արաւ պահպան Շխալիին: Գիւղացիները արդէն երեք տարի է, ինչ դրանք ձեռքից հանգստութիւն չունէին. չըճակայ գիւ-ղերը այսուհետեւ ազատ չունչ կը քաշեն:

Դեռ այս լուրը չէր հնացել, ահա մի ուրիշ լուր տարածվեց, որ երրորդ մասի պրիստաւ Տէր-Աս-տուածատրեանը, որը նորեւն էր փոխադրվել Արեւից Գանձակի գաւառը, յունվարի 9-ին եւ-րկար ու ձիւ հրացանաձգութեան ժամանակ Անդրկովկասեան երկաթուղու Գեօրան կայա-րանի մօտ սպանում է Սախալինից փախած եւ իր գործած անգլիկութիւններով յայտնի աւա-ղակներին: Միջոցով Արեւստամիւն Մաշադին այն արհեստը դադաններին էր, որը իր քաղութիւնը չափում էր մարդկային գոհերի թւերով եւ կողոպուտներով. դեռ երկու տարի չը կար, որ նա փախել էր եւ արդէն թափել էր մօտ քսան անմեղ մարդկանց արիւն, իսկ կողոպուտը անհայտ: Անցեալ այնանը նա Եւ-լաից Շուշի տանող խճուղու վրա կողոպուտից մի շարք կառքեր մօտ 30 մարդու էր, մահաւանդ նրա նոյնքան կատաղի զինա-կից Ջուլիին:

Անցեալ տարվայ սեպտեմբերի սկզբներում իր գեղեցիկ ձիով Գեօրան ինչ եւ չափելի գիւ-ղերի մօտ անյայտացաւ հաղիչներ Յարու-թիւն Ջաքարեանը, մի շատ պատկառելի անձնաւորութիւն. երկար որոնցից նրան, բայց իզուր: Այդ հանգամանքը տեղից տուեց տեղացի յիմար պառաւանքին զանազան առաւ-պելներ յօրինելու, բայց արարակիցի իրողութիւնը պարզվեց միայն այն ժամանակ, երբ թշուառ Յարութիւնի ձին երեւաց Ջուլիի ձեռքում: Պատմում են եւ այն, որ այդ դժբախտ մարդու նահատակութիւնը կատարվել է շատ հանդիսաւոր կերպով. անցեալ ամառ Մաշադու-քըրջ հովուի որդուն սարում անյայտ մարդիկ սպանում են եւ դիակը ձգում Հաղիչների հանդէ-ր, բարեկամները կասկածը ձգում են այդ գիւղի վրա եւ ահա որդուց զրկված քըրջ թախաճանքին զիջելով՝ աւաղակները բռնում են Յա-րութիւնին, տանում նոյն կնոջ առաջ, օպանում եւ դիակը անհետացնում:

Պ. Տէր-Աստուածատրեանի անվեհերութիւնը եւ քաղութիւնը, որ առաջինը անգամ չէ ցոյց տալիս, իրաւունք է տալիս մեզ կարծելու, որ Մաշադու հրոսակային խուճը չուտով իսպառ կը ջնջվի եւ ցանկալի խաղաղութիւն կը տիրէ

բացառութեամբ մի երկուսի: Այդ վարդապետ-ները եթէ իրօք կամենում են ծառայել գործին եւ նրանց համար թանկ է հոգեւորականութե-ան վարիկ բարձրանալը, եթէ իրանք չեն ցանկանում փախչալական, քահանա կառավարու-թիւն, այլ անկեղծ կերպով նուիրված են իրանց պաշտօնին, թող մի կողմ դնեն թագա-ւորող «եօլա» տանելու» սկզբունքը, մշակեն որոշ հրահանգներ, ժողովն ամենաճիշդ վիճա-կագրական տեղեկութիւններ եկեղեցու, երէց-փոխի, քահանայի, սրա եւ ժողովրդի արդա-րութեան մասին եւ իրանց տեղեկագիրը ներկայացնեն վեհափառ Կաթողիկոսին, որը ի դէպ ասեմք, առանձին սիրով հետաքրքրվում է այդպիսի տեղեկութիւններով: Երբ ամեն կողմից կը ժողովվեն հում նիւթերը, թերեւս կամայ ակամայ կը հրաւիրվեն գործին ծանօթ հոգեւորականներ հում նիւթը մշակելու, կող-մակերպելու այն հրահանգները, որոնք իբրեւ եկեղեցական օրէնք կը գործադրվեն, ազատե-լով հոգեւոր հաստատութիւններն ու սրա պաշ-տօնեաներին ամեն տեսակ օտոնագութիւններից ու անխիստական դրութիւնից:

Դուք, երիտասարդ փոխանորդներ, եթէ ձեր նախորդների պէս մի օրում հինգ գիւղ կը պատէք ժամօցի համար, եթէ դուք էլ մի կերպ եօլա կը տանէք ձեզ հաւատացած վիճակը, էլ ինչով էք տարբերվելու ձեր նախորդներից, որոնք անունը տալիս՝ առանձին հեղափոխա-ր-ժուլներ էք անում: Գործեցէք, քանի ժամա-նակը ձեր ձեռքին է:

X.

Նվեքսանդրօպօլ:

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванская ул., № 27